ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/278

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի տնօրեն

Ն. Մանուկյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 269.110.50882),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.12.2020թ. թիվ 26/26-1/19746-2020 գրությամբ «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 24.12.2020թ. թիվ Ե/40/2525-20 գրության հիման վրա 29.12.2020թ. թիվ 26/26-1/19746-2020 գրությամբ նախաձեռնել է «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/278 ընթացակարգի շրջանակներում 15.01.2021թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է, որ Կողմերի միջև պայմանագիրը կնքվել է 27.05.2020թ., մատակարարման ժամկետ սահմանվել է 30 օր, և տվյալ ժամանակահատվածում ինչ-որ ապրանք երկիր ներմուծելը, երկրում ստեղծված իրավիճակով պայմանավորված, բավականին դժվար էր: Սակայն Ընկերությունը հունիսի 4-ին մատակարարել է պայմանագրով նախատեսված որոշ ապրանքներ և հունիսի 22-ին՝ պայմանագրով նախատեսված ժամկետի մեջ, Ընկերությունը գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով պայմանագրի ժամկետը երկարաձգել: Պատվիրատուն մեկ անգամ 30 օրով երկարաձգել է մատակարարման ժամկետը, որի ընթացքում Ընկերությունը կատարել է երկրորդ մատակարարումը, իսկ մնացած երեք չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրում առկա է եղել վրիպակ, որի վերաբերյալ Ընկերությունը հայտնել է Պատվիրատուին, իսկ վերջինս էլ հայտնել է, որ Ընկերությունը պետք է մատակարարի այն, ինչը նախատեսված է տեխնիկական բնութագրով: Այնուհետև Ընկերությունը պայմանագիրը լուծելու խնդրանքով դեկտեմբերի 7-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ հաշվի առնելով պայմանագրով նախատեսված և երկրում տիրող ֆորս-մաժոր իրավիճակը՝ կողմերը կարող են լուծել պայմանագիրը: Սակայն դեկտեմբերի 15-ին Պատվիրատուից ստացվում է գրություն, որի համաձայն՝ Պատվիրատուն, անտեսելով Ընկերության գրությունը, միակողմանի լուծել է պայմանագիրը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը հայտնել է, որ պայմանագրի շրջանակներում փորձել է հնարավորինս պատշաճ կատարել պայմանագրային պարտավորությունները:

3. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.12.2020թ. թիվ Ե/40/2525-20 գրությամբ

հայտնել է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար մարտկոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված «» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի միջև կնքվել է N01/129 առ 27.05.2020թ. պայմանագիրը (հետայսու՝ Պայմանագիր):

Հաշվի առնելով, որ Պայմանագրի թիվ 1, 4, 5, 8, 13-15, 17, 21, 24, 27 և 29-րդ չափաբաժինների մասով նախատեսված ապրանքներն Ընկերության կողմից չեն մատակարարվել՝ Պայմանագիրը վերոնշյալ չափաբաժիններով միակողմանի լուծվել է, որի մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվել է 14.12.2020թ.:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա) պարբերության պահանջներով՝

ներկայացնում է Ընկերության տվյալները՝ համապատասխան փաստաթղթերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/278 ընթացակարգի շրջանակներում 15.01.2021թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/278 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/278 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի միջև 27.05.2020թ. կնքվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-54/20» ծածկագրով մարտկոցների մատակարարման N 01/129 պայմանագիրը, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված մարտկոցներ, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացույցային օր:

3. «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին ուղղված 15.12.2020թ. թիվ Ε/13/2396-20 ծանուցմամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն հայտնել է հետևյալը. ««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար մարտկոցների ձեռքբերման նպատակով ս/թ. ապրիլի 13-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-54/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 1, 4, 5, 8, 13, 14, 15, 17, 21, 24, 27 և 29-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի միջև կնքվել է N01/129 առ 27.05.2020թ. պայմանագիրը՝ 1747920 ՀՀ դրամ ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 15-րդ չափաբաժնով սահմանված 8 հատ մարտկոցները, 24-րդ չափաբաժնով սահմանված 1 հատ մարտկոցը և 29-րդ չափաբաժնով սահմանված 6 հատ կուտակիչ մարտկոցները, որոնց գինը կազմում է 334800 ՀՀ դրամ, Ընկերության կողմից չեն մատակարարվել:

Համաձայն Պայմանագրի՝

-2.4.1 կետի՝ «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»:

-2.4.2 կետի՝ «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետում»,

-2.4.4 կետի՝ «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով»:

- Հավելված N 1-ի՝ «վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացույցային օրում:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1, այն է՝ գնորդը իրավունք ունի՝

-2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացույցային օրից ավելի»:

-2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը,

-2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացույցային օրից ավելի»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ միակողմանի լուծում է Ընկերության հետ 2020թ. մայիսի 27-ին կնքված թիվ 01/129 պայմանագիրը 15, 24 և 29-րդ չափաբաժինների մասով:

4. Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 17.12.2020թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.12.2020թ. թիվ 26/26-1/19746-2020 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 24.12.2020թ. թիվ Ε/40/2525-20 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի կողմից ՍՑ-ՆԳ-2020/278 ընթացակարգի շրջանակներում հայտնած դիրքորոշումը՝ համապատասխան փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի միջև 27.05.2020թ. կնքվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-54/20» ծածկագրով մարտկոցների մատակարարման N 01/129 պայմանագիրը, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված մարտկոցներ, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից 30 օրացույցային օր:

Ընկերությունը 22.06.2020թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Պայմանագրի շրջանակներում Ընկերությունը պետք է մատակարարի տարբեր տեսակի մարտկոցներ:

Համաձայն պայմանագրի՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանված 30 օրացուցային օր՝ պայմանագրի կնքման օրվանից:

Կորոնավիրուսի համավարակի պատճառով շատ երկրներում հայտարարված արտակարգ իրավիճակների հետևանքով անհնարին է դարձել Ընկերության կողմից ապրանքի ձեռքբերումը, ներմուծումը և մատակարարումը համաձայն պայմանագրի:

Հիմք ընդունելով մեր միջև վավերացված Պայմանագրի 7 և 8.6 կետերը՝ հայցելով Ձեր ներողամտությունը, խնդրում եմ երկարաձգել ապրանքի մատակարարման ժամկետը»:

Միաժամանակ արձանագրում եմ, որ գործում առկա նյութերի համաձայն Ընկերությունը 07.12.2020թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ընկերությունը պետք է մատակարարեր տարբեր տիպի մարտկոցներ:

Ապրանքների մեծ մասը հիմնականում մատակարարվել են:

Տարեսկզբից աշխարհում և մեր երկրում տիրած պանդեմիայի հետևանքով և ցավալի պատերազմի պատճառով անհնարին է դարձել ամբողջությամբ պատշաճ կատարել պայմանագրով ստանձնած մեր պարտավորությունները:

Հայցելով Ձեր ներողամտությունը, խնդրում եմ՝ հիմք ընդունելով մեր միջև վավերացված պայմանագրի 7 կետը, չմատակարարված ապրանքների մասով, մասնակի լուծել վերը նշված պայմանագիրը»:

«ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին ուղղված 15.12.2020թ. թիվ Ե/13/2396-20 ծանուցմամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն հայտնել է հետևյալը. ««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար մարտկոցների ձեռքբերման նպատակով ս/թ. ապրիլի 13-ին հրապարակված ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-54/20 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 1, 4, 5, 8, 13, 14, 15, 17, 21, 24, 27 և 29-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի միջև կնքվել է N01/129 առ 27.05.2020թ. պայմանագիրը՝ 1747920 ՀՀ դրամ ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 15-րդ չափաբաժնով սահմանված 8 հատ մարտկոցները, 24-րդ չափաբաժնով սահմանված 1 հատ մարտկոցը և 29-րդ չափաբաժնով սահմանված 6 հատ կուտակիչ մարտկոցները, որոնց գինը կազմում է 334800 ՀՀ դրամ, Ընկերության կողմից չեն մատակարարվել:

Համաձայն Պայմանագրի՝

-2.4.1 կետի՝ «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»:

-2.4.2 կետի՝ «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետում»,

-2.4.4 կետի՝ «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով»:

- Հավելված N 1-ի՝ «վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացույցային օրում:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1, այն է՝ գնորդը իրավունք ունի՝

-2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացույցային օրից ավելի»:

-2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը,

-2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացույցային օրից ավելի»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ միակողմանի լուծում է Ընկերության հետ 2020թ. մայիսի 27-ին կնքված թիվ 01/129 պայմանագիրը 15, 24 և 29-րդ չափաբաժինների մասով:

Այսպիսով՝ գործում առկա նյութերի համաձայն՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, համաձայն 27.05.2020թ. կնքված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-54/20» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի, պարտավոր էր մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքները՝ թվով 12 չափաբաժնի մասով՝ 1908300 ՀՀ դրամ ընդհանուր գումարով, որից 15-րդ չափաբաժնով սահմանված 8 հատ մարտկոցները, 24-րդ չափաբաժնով սահմանված 1 հատ մարտկոցը և 29-րդ չափաբաժնով սահմանված 6 հատ կուտակիչ մարտկոցները, որոնց գինը կազմում է 334800 ՀՀ դրամ, Ընկերության կողմից չեն մատակարարվել:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2020/278 ընթացակարգի շրջանակներում հայտնել է, որ Ընկերությունը Պայմանագիրը լուծելու խնդրանքով դեկտեմբերի 7-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ հաշվի առնելով Պայմանագրով նախատեսված և երկրում տիրող ֆորս-մաժոր իրավիճակը՝ կողմերը

կարող են լուծել Պայմանագիրը: Սակայն դեկտեմբերի 15-ին Պատվիրատուն, հիմք չընդունելով Ընկերության գրությունը, միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

Ամփոփելով՝ Ընկերությունը հայտնել է, որ Պայմանագրի շրջանակներում փորձել է հնարավորինս պատշաճ կատարել պայմանագրային պարտավորությունները, մինչդեռ Պայմանագրով մատակարարման ենթակա որոշ ապրանքներ չի մատակարարել՝ երկրում ստեղծված իրավիճակով պայմանավորված:

Պատվիրատուի կողմից տեղեկագրում 17.12.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով,*** եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերը, Ընկերության կողմից Պայմանագրի կատարմանն ուղղված գործողությունները, գտնում եմ, որ Ընկերության դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության, ***քանի որ Ընկերությունը ՀՀ-ում ստեղծված իրավիճակում, այն է՝ Covid-19 համավարակի արդյունքում ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության և դրա հետևանքով կիրառված սահմանափակումների, ինչպես նաև ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարելու հետևանքով, օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտականությունները մինչև Պայմանագրի միակողմանի լուծելը պատշաճ կատարելու հնարավորությունից***:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.12.2020թ. թիվ 26/26-1/19746-2020 գրությամբ «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**